ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 16

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԹԻՎ 16 ՆԻՍՏԻ

Ք.Երեւան 30.05.2025թ.

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) Հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝Խորհուրդ) արտահերթ նիստն անցկացվեց առկա եղանակով Ինստիտուտի գիտական խորհրդի նիստերի դահլիճում (Երեւան, Ալ.Մանուկյան 11, 2-րդ մասնաշենք, 3-րդ հարկ):

**Նիստին ներկա էին 20 անդամներից 14-ը**:

Հասմիկ Ավագյանը- ՀՀ կրթության,գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

Գոհար Մամիկոնյանը-ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ

Արսեն Հակոբյան-ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի փորձաքննության և վերլուծությունների վարչության պետ

Հարություն Յավրյան-ՀՀ սպորտի վաստակավոր գործիչ

Աշոտ Տիրացույան- Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և պետական ինստիտուտի ցիկլիկ մարզաձևերի ամբիոնի դասախոս

Եկատերինա Նահապետյան- Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և պետական ինստիտուտի ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի դասախոս

Նարինե Մարե-Գասպարյան- Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և պետական ինստիտուտի ցիկլիկ մարզաձևերի ամբիոնի դասախոս

Անահիտ Բարսեղյասն- Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և պետական ինստիտուտի հասարակական և հումանինտար գիտությունների ամբիոնի դասախոս

Լուսինե Տանաջյան - Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի հասարակական և հումանիտար գիտությունների ամբիոնի դասախոս

Լաուրա Միրզոյան- Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և պետական ինստիտուտի մարզչամանկավարժական ֆակուլտետի ուսանող

Սուրեն Եղիազարյան- Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և պետական ինստիտուտի մարզչամանկավարժական ֆակուլտետի ուսանող

Հեղինե Սարկիսյան- Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և պետական ինստիտուտի մարզչամանկավարժական ֆակուլտետի ուսանող

Սուսան Ավետիսյան- Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և պետական ինստիտուտի առողջարարական տեխնոլոգիաների և սպորտային տուրիզմի կառավարման ֆակուլտետի ուսանող

**Առցանց տարբերակով նիստին մասնակցել է՝**

Ժիրայր Դավեյանը-- Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և պետական ինստիտուտի մարզչամանկավարժական ֆակուլտետի ուսանող

**Բացակայում էին՝**

Արսեն Միխայլովը-ՀՀ վարչապետի օգնական

Սամվել Գևորգյանը-Ն.Մուշեղյանի անվան ըմբշամարտի օլիմպիական

մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն

Էդուարդ Քալանթարյանը-Հայաստանի Հանրային հեռուստաընկերության մարզական մեկնաբան

Ռոբերտ Խաչատրյանը-Հայաստանի ըմբշամրտի ֆեդերացիայի նախագահ

Դավիթ Մոսինյանը-<<Հակադոպինգային գործակալություն>> ՊՈԱԿ-ի տնօրեն

Սերգեյ Աբրահամյանը- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության բաժնի պետ

Քանի որ Հոգաբարձուների խորհուրդը դեռևս չուներ ընտրված նախագահ, նիստը վարեց խորհրդի տարիքով ավագ անդամ Հարություն Յավրյանը:

Քննարկման փուլում Խորհրդի անդամ Գոհար Մամիկոնյանը հանդես եկավ առաջարկությամբ՝ օրակարգում ավելացնել ևս մեկ հարց, այն է, Հոգաբարձուների

խորհրդի նախագահի ընտրության հարցը: Խորհրդի նախագահի պաշտոնում առաջադրելով Հասմիկ Ավագյանի թեկնածությունը:

**Օրակարգ**

1. Օրակարգի հաստատում:

2. Հոգաբարձուների խորհուրդի նախագահի ընտրություն:

3. Ինստիտուտի կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու վերաբերյալ:

4. Ինստիտուտի կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ:

5. Ինստիտուտի ռեկտոր Տիգրան Սիմոնյանին միանվագ դրամական պարգևատրում տրամադրելու մասին

6. Այլ հարցեր:

**Օրակարգի 1-ին հարց**

Օրակարգը հաստատվեց միաձայն

**Օրակարգի 2-րդ հարց**

Քվեարկության դրվեց Խորհրդի նախագահի պաշտոնում Հասմիկ Ավագյանի թեկնածությունը:

Քվեարկության արդյունքներով՝ 13 կողմ, 1 դեմ,

Հասմիկ Ավագյանը ընտրվեց Խորհրդի նախագահ:

**Օրակարգի 3-րդ հարց**

Զեկուցող՝ Տիգրան Սիմոնյան

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը ներկայացրեց Ինստիտուտի հիմնադրամի կառուցվածքը և հաստիքացուցակը փոփոխելու անհրաժեշտությունը՝ նշելով, որ նախկինում հիմնադրամն ունեցել է ուրճացված կառուցվածք, ինչը խոչընդոտել է ինստիտուտի գործունեության արդյունավետ կազմակերպմանը:

Նախատեսվող կառուցվածքային փոփոխություններն ուղղված են կրթական և գիտական գործունեության որակի բարձրացմանը, կառավարման արդյունավետության աճին, ինչպես նաև Ինստիտուտի համապատասխանեցմանը միջազգային չափանիշներին:

Փոփոխությունների հիմքում ընկած է ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան առաջատար բուհերի փորձի ուսումնասիրությունը: Մասնավորապես, ուսումնասիրվել են Երևանի Պետական Համալսարանի և Հայաստանի Տնտեսագիտական Համալսարանի կառավարման մոդելները՝ որպես

երկրի խոշորագույն բարձրագույն ուսումնական հաստատություններ, ինչպես նաև Գերմանիայի, Քյոլնի և Ռուսաստանի առաջատար համալսարանների կառուցվածքները՝ որպես միջազգային մակարդակի օրինակներ:

Ներկայացված փոփոխություններ՝

Ներդրվել են նոր պաշտոններ՝ ուսումնական աշխատանքների գծով և գիտական գծով պրոռեկտորներ՝ գիտության և ուսումնական գործընթացների համակարգումը առավել արդյունավետ կազմակերպելու համար

Ստեղծվեցին հետևյալ նոր ստորաբաժանումները.

Արտաքին կապերի և միջազգային համագործակցության վարչություն

Հաշվապահական հաշվառման և տնտեսական գործունեության կազմակերպման վարչություն

Կրթության էլեկտրոնային և տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարման բաժին (ՏՏ և էլեկտրոնային կառավարման բաժինների միավորմամբ)

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի տվյալների հավաքագրման և վերլուծության կրթության կառավարման կենտրոն

Ընդունելության և դիմորդների խորհրդատվության բաժին

Փակվեցին հետևյալ բաժինները.

Բակալավրիատի բաժին (գործառույթները փոխանցվեցին դեկանատներին և ամբիոններին)

Նախապատրաստական, լրացուցիչ և շարունակական կրթության բաժին (գործառույթները փոխանցվեցին ամբիոններին և գործող ու նոր ստեղծվող ստորաբաժանումներին)

Մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժնի ենթակայությունը անցավ գիտության գծով պրոռեկտորին:

Այս փոփոխությունները նպատակ ունեն վերափոխել բուհի կառուցվածքը՝ համապատասխանեցնելով այն ժամանակակից կրթական և գիտական պահանջներին, ինչպես նաև բարելավել ուսանողների ներգրավվածությունը և ուսումնական գործընթացի արդյունավետությունը:

Կառուցվածքային փոփոխությունների արդյունքում բուհի գործունեության մեջ նախատեսվում է հետևյալ բարելավումները՝

1. Կառավարման արդունավետության բարձրացում

2. Ուսումնական գործընթացի որակի բարելվում

3.Գիտական գործունեության խթանում

4. Միջազգային համագործակցության զարգացում

5. Ռեսուրսների օպտիմալ կառավարում և ֆինանսական միջոցների խնայում

**Դիտարկումներ**

Խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանը նիստի ընթացքում ուղղեց հարց խորհրդի կազմում ընդգրկված դասախոս անդամներին՝ պարզելու հետևյալը.

Արդյոք նրանք մասնակցել են ինստիտուտի կառուցվածքային փոփոխությունների նախապատրաստական աշխատանքներին,

Տեղյակ եղե՞լ են, որ կառուցվածքային փոփոխությունների հարցը քննարկվելու է հենց այս ծավալով և ձևաչափով, ի՞նչ տեսակետ կամ մասնագիտական խորհրդատվություն են ներկայացրել գործընթացի վերաբերյալ:

**Պատասխան**

Աշոտ Տիրացույանը պատասխանեց հարցին, նշելով, որ ինքը և խորհրդի կազմում ընդգրկված այլ դասախոսներ մասնակցել են ինստիտուտում իրականացված կառուցվածքային փոփոխությունների նախապատրաստական գործընթացին: Նրա խոսքով, փոփոխությունները նախապես քննարկվել են ամբիոններում, որտեղ առանձին հարցերի շուրջ տեղի են ունեցել մասնագիտական քննարկումներ, ներկայացվել են դիտարկումներ և առաջարկություններ:

Լուսինե Տանանջյանը պատասխանելով Հասմիկ Ավագյանի հարցին, նշեց, որ վերակազմավորումների և փակումների հիմքում պետք է լինի այդ տարիների արդյունքների վերլուծությունը, գոնե կարճաժամկետ կտրվածքով, որպեսզի կատարվի այդ վերակազմավորումների իրականացումը:

**Դիտարկումներ**

Գոհար Մամիկոնյանը հարց ուղղեց խորհրդի անդամ Աշոտ Տիրացույանին, թե արդյոք ի՞նչ կարծիք ունեն նոր բացվող բաժինների հետ կապված:

**Պատասխան**

Աշոտ Տիրացույանը պատասխանեց հարցին,նշելով,որ ամբիոններում տեղի ունեցած քննարկումներից հետո եկել են ընդհանուր եզրահանգման, որ նորաստեղծ բաժիններն անհրաժեշտ են և համապատասխանում են ինստիտուտի զարգացման ներկա և ապագա պահանջներին:

**Դիտարկումներ**

Խորհրդի անդամ Գոհար Մամիկոնյանը արձագանքեց ներկայացված կառուցվածքային փոփոխություններին՝ նշելով, որ ներկայացված հիմնավորումները դեռևս լիարժեք համոզիչ չեն: Մասնավորապես, նա ընդգծեց, որ բացակայում է հստակ տեղեկատվություն այն մասին, թե կոնկրետ որ արտասահմանյան բարձրագույն ուսումնական հաստատությունների փորձն է ուսումնասիրվել և ինչ ձևով է այդ փորձը ներդրվել ՀՖԿՍՊԻ նոր կառուցվածքում: Գոհար Մամիկոնյանը շեշտեց նաև, որ նման ծավալով կառուցվածքային վերափոխման համար անհրաժեշտ է ներկայացնել համեմատական վերլուծություն՝ հիմնված թվային և որակական ցուցանիշների վրա՝ հիմնավորելով յուրաքանչյուր նոր ստորաբաժանման անհրաժեշտությունն ու սպասվող արդյունավետությունը:

**Պատասխան**

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը պատասխանելով հարցին, նշեց, թե տեղական և թե արտասահմանյան ԲՈՒՀ-երի ցանկը ներկայացված է, որ տվյալ փոփոխությունները կատարելու համար ստեղծված է եղել հանձնաժողով, որը աշխատել է տևական ժամանակ, և անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի թիմին միացել են այլ աշխատակիցներ, ովքեր չեն եղել հանձնաժողովի անդամ: Նա նշեց, որ այդ փոփոխությունները արվել են որոշակի խնդիրներ տեսնելուց հետո: Տիգրան Սիմոնյանը նշեց, որ հանձնաժողովի կատարած աշխատանքը ներկյացվել է գիտխորհրդին, այնտեղ քննարկվել և ընդունվել է:

**Դիտարկումներ**

Խորհրդի անդամ Գոհար Մամիկոնյանը նշեց, որ կատարված աշխատանքը գնահատելի է, սակայն մի փոքր անհամաձայնություններ ունի փաստաթղթի հետ կապված:

Խորհրդի անդամ Գոհար Մամիկոնյանը հարց ուղղեց ռեկտոր Տիգրան Սիմոնյանին՝ հետաքրքրվելով կառուցվածքային փոփոխությունների կոնկրետ ծավալով: Նա հարցրեց. Քանի՞ հաստիք կա ներկայումս ինստիտուտում, և քանի՞ հաստիք է ենթարկվելու փոփոխության՝ այդ թվում՝ նոր հաստիքների ավելացման կամ գործողների վերացման միջոցով:

**Պատասխան**

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը պատասխանեց հարցին, նշելով, որ այս պահին ինստիտուտը ունի 153 հաստիք, այս պահին ներկայացված կառուցվածքով հաստիգով ու հաստիքացուցակով հաստիքների քանակը նվազել է 7-ով, կլինեև ավելին, սակայն քոլեջի սովորողների թվի քանակով պայմանավորված ավելացել է քոլեջի վարչակազմը:

**Դիտարկումներ**

Խորհրդի անդամ Արսեն Հակոբյանը նիստի ընթացքում դիմեց ռեկտոր Տիգրան Սիմոնյանին՝ խնդրելով, որպեսզի վերջինս ներկայացնի ինստիտուտի նոր կառուցվածքի հիման վրա կազմված հաստիքացուցակը:

**Պատասխան**

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը սլայդի ձևաչափով ներկայացրեց ինստիտուտի նոր կառուցվածքի հիման վրա մշակված հաստիքացուցակը: Նա մանրամասն ներկայացրեց բոլոր հաստիքները՝ նշելով. առկա ստորաբաժանումների անվանումները, յուրաքանչյուր ստորաբաժանման հաստիքների քանակը, կատարված փոփոխությունները (փակված, վերակազմավորված և նորաստեղծ միավորներ) :

**Դիտարկումներ**

Խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանը հարց ուղղեց ռեկտոր Տիգրան Սիմոնյանին, թե ինչ գործառույթներ պետք է իրականացնեն ընդունելության և դիմորդների բաժինը:

**Պատասխան**

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանը պատասխանեց Խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանի հարցին՝ նշելով, որ ընդունելության և դիմորդների խորհրդատվության բաժինը ստեղծվել է՝ ապահովելու ընդունելության ամբողջ գործընթացի կենտրոնացված, համակարգված և շարունակական կազմակերպումը:

Նա նշեց, որ բաժինը կիրականացնի հետևյալ գործառույթները,

Դիմորդների տեղեկատվական խորհրդատվություն,

Դիմորդների փաստաթղթերի ընդունում և նախնական մշակում՝Հետադարձ կապ և ուղեկցող ծառայություններ դիմորդների համար, ինչպես նաև անհրաժեշտությոն դեպքում կիրականացնեն աշխատանքներ շարունակական և լրացուցիչ կրթության նպատակով իրստիտուտին դիմած դիմորդների հետ:

Ընդունելության գործընթացի կազմակերպում՝ այլ ստորաբաժանումների հետ համագործակցությամբ :

**Առաջարկներ**

Խորհրդի անդամ Գոհար Մամիկոնյանի ձևակերպումների հիման վրա Խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանը առաջարկեց քվեարկել երկու տարբերակ՝ 1-ին տարբերակ– կառուցվածքային փոփոխությունների նախագիծը դնել քվեարկության, այնպես, ինչպես ներկայցվել է այս պահին, իսկ 2-րդ տարբերակ՝ տրամադրել ողջամիտ ժամանակ՝ լրացուցիչ հիմնավորումներ ներկայացնել և նորից վերադառնալ քննարկնամ:

**Հարցը դրվեց քվեարկության.**

Խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանի առաջարկությամբ 1-ին տարբերակով՝ կառուցվածքային փոփոխությունների նախագիծը դրվեց քվեարկության:

**Քվեարկության արդյունքները՝**

Կողմ – 8

Դեմ – 6

Ձեռնպահ – 0

2-րդ տարբերակով՝ հիմնավորված փաստաթղթերի լրացված տարբերակի ներկայացման համար տրամադրել ողջամիտ ժամանակ:

**Քվեարկության արդյունքները՝**

Կողմ – 6

Դեմ – 8

Ձեռնպահ – 0

**Որոշում** Հոգաբարձուների խորհուրդը հաստատեց Ինստիտուտի ներկայացված կառուցվածքը:

**Օրակարգի 4-րդ հարց**

Ռեկտոր Տիգրան Սիմոնյանի խնդրանքով՝ Ինստիտուտի կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու վերաբերյալ հարցը հանվեց օրակարգից:

**Օրակարգի 5-րդ հարց**

Խորհրդի նախագահ Հասմիկ Ավագյանը առաջարկեց քվեարկման դնել Ինստիտուտի ռեկտոր Տիգրան Սիմոնյանին միանվագ դրամական պարգևատրում տրամադրելու մասին հարցը:

**Հարցը դրվեց քվեարկության.**

**Քվեարկության արդյունքները՝**

Կողմ՝ 13

Դեմ՝ 0

Ձեռնպահ՝ 1

**Որոշում** ինստիտուտի ռեկտոր Տիգրան Սիմոնյանին տրամադրել միանվագ դրամական պարգևատրում՝ մեկ ամսվա աշխատավարձի չափով:

Հոգաբարձուների Խորհրդի Նախագահ Հասմիկ Ավագյան

Քարտուղար Լաուրա Միրզոյան